

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
հուլիսի 13 -ի N 819 - Ն որոշման

**ԴԵՊԱՏՈՄՄՈՎ ԻՐԱՑՎՈՂ ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ**

1. Մասնագիտական հրատարակություններում դեղատոմսով իրացվող դեղերի մասին տեղեկատվությունը, գրանցման ժամանակ հաստատված բժշկական կիրառման հրահանգին համապատասխան, պետք է պարունակի հետևյալ տվյալները՝

- 1) դեղի անվանումը.
- 2) դեղի ակտիվ բաղադրատարրի (բաղադրատարրերի) համընդհանուր անվանումները.
- 3) դեղաձևը.
- 4) դեղի կիրառման ցուցումները, հակացուցումները, դեղաչափերը և ընդունման եղանակները.
- 5) դեղի կիրառման հրահանգները և հատուկ նախազգուշացումները.
- 6) դեղի փոխազդեցություններն այլ դեղերի հետ կամ այլ բնույթի փոխազդեցությունները.
- 7) դեղի կիրառումը վերաբաղրողական տարիքում, հղիության և կրծքով կերակրման շրջանում.
- 8) դեղի ազդեցությունն ուշադրություն պահանջող գործողությունների վրա (տրանսպորտային միջոցների վարում, մեխանիզմների հետ աշխատանք).
- 9) դեղի կողմանակի ազդեցությունները.
- 10) գերդեղաչափումը.
- 11) դեղի անհամատեղելիությունն այլ դեղերի և սննդի հետ.
- 12) դեղադիմամիկան (դեղի ազդեցությունները և դրանց մեխանիզմները).

- 13) դեղակինետիկան (դեղի կենսաքիմիական փոխակերպումների կինետիկ օրինացափությունները).
- 14) դեղի պահպանման առանձնահատկությունները (առկայության դեպքում).
- 15) դեղի գրանցման հավաստագրի իրավատիրոջ վերաբերյալ տվյալները.
- 16) դեղի գրանցման համարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԴԵԿԱՎԱՐ

Վ. ԱՏԵՓԱՆՅԱՆ